Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

10-րդ բաժանորդային | 1930—31 թ.

ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Վ. ՎԻՇՆԵՎՍԿԻՅ

# ԱՌԱՋԻՆ ՀԵԾԵԼԱԶՈՐԸ

(ПЕРВАЯ КОННАЯ)

*Թարգման.* Գ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ

*Ընկ.* ԲՈՒԴՅՈՆՆՈՒ *կարծիքը* *պուլեմյոտչիկ* ՎԻՇՆԵՎՍԿՈՒ «**ԱՌԱՋԻՆ ՀԵԾԵԼԱԶՈՐԸ**» *պիեսայի մասին.*

Այս պիեսի ընթերցողներից ու դիտողներից յեվ ոչ մեկը չի կարող մընալ անտարբեր: Կռված մարտիկին նա կստիպի վերհիշել քաղաքացիական կռիվների, մեծ մարտերի ու արշավների անմոռանալի ապրումները: Յերիտասարդ բանակայինին նա ցույց կտա հզոր Կարմիր Բանակ կոփող ուժերի, իրադարձությունների ու մարդկանց իսկական ու ճշգրիտ դեմքը:

# ԱՌԱՋԻՆ ՀԵԾԵԼԱԶՈՐԻ ԱՆՑՅԱԼԻՑ

*Առաջին Հեծելազորն ստեղծված է 1919 թվի նոյեմբերի 17-ին՝ հարավային ֆրոնտում. 1929 թվին լրացավ նրա առաջին տասնամյակը։ Այդ տասնամյակի տոնակատարումը հարմարեցված է ամբողջ Կարմիր Բանակի 12-րդ տարեդարձի օրվան, այսինքն՝ 1930 թվի փետրվարի 23-ին։*

*Հեծելազորների խոշոր կազմակերպությունն առաջին անգամ ծնունդ տվավ դաժանագույն այն պայքարների օրերին, վոր մղում եր ապստամբված բանվոր դասակարգն ու չքավոր գյուղացիությունը՝ ընդդեմ իր հինավուրց թշնամիների—կապիտալիստների և կալվածատերերի։*

*Իշխանության համար մղվող պայքարի դժվարությունը ծանրանում եր նրանով, վոր պրոլետարիատը զուրկ եր իր սեփական կազմակերպված զինված ուժից և հարկադրված եր ստեղծելու այդ ուժը հենց հայրենական և ոտար բուրժուազիայի դեմ մղվող պայքարի պրոցեսում։ Մեր Կարմիր Բանակը ծնունդ է առել, աճել է, սովորել և հաղթել իր թշնամիներին և ամրացել է պայքարներում, քաղաքացիական պատերազմի ռազմադաշտերում։ Մարդկության պատմության մեջ մենք շատ քիչ այնպիսի օրինակներ կըգտնենք, յերբ զինված ուժերը կազմակերպված են յեղել ռազմադաշտերում։ Կարմիր Հեծելազորը զարգանում եր Կարմիր Բանակի հետ միասին՝ նրա անբաժանելի մասը կազմելով։ Կարմիր Հեծելազորի մասսայի առավելապես խոշոր և ցայտուն մարմնացումը մենք ունեցել ենք ի դեմս առաջին հեծելազորի։*

*Այնտեղ, վորտեղ կոզակային—կուլակային յելույթներն ընդդեմ Հոկտեմբերյան Հեղափոխության ղեկավարելիս են յեղել ցարական սևհարյուրակային գեներալները Կալեդինը, Կրասնովը, Կորնիլովը, Ալեքսեյեվը և Դենիկինը, այնտեղ, վորտեղ այդ հեծյալ մասերը հարձակվելիս են յեղել մեր կարմիր-գվարդիական և պարտիզանական դեռևս չամրացած ջոկատների վրա, այնտեղ—Ռուսաստանի հարավում յերեվացել և պայքարելով՝ սկսել են կազմակերպվել ու միանալ կարմիր հեծյալ ջոկատները, աստիճանաբար աճելով և փոքրիկ ջոկատներից գնդերի, բրիգադների և դիվիզիաների վերածվելով։ Այնտեղ, Դոնի վրա, լայնարձակ տափաստաններում, այժմյան առաջին հացահատիկային «Գիգանտ» խորհտնտեսության ռայոններում է, ահա, վոր ծնունդ է առել Առաջին Հեծելազորը։*

*Արդեն 1919 թվի հունվարին, այն մոմենտներից մեկի պահին, յերբ Ցարիցինը (ներկայումս Ստալինգրադը) գրեթե կատարելապես օղակված եր, Կարմիր Հեծելազորը ցույց տվեց իր զորությունը։ Մեր այժմյան Լենինգրադյան 4-րդ Կարմրադրոշ հեծյալ դիվիզիան իր քաջարի գործողություններով տասնամեկ օրվա ընթացքում ջախջախեց ավելի քան յերկու տասնյակ սպիտակ գվարդիական կազակային գնդեր և դրավեց ռազմա-*

կան հսկայական ավար՝ զինվելով և մթերվելով ի հաշիվ հակառակորդի։ Դա Կարմիր Հեծելազորի առաջին խոշոր հաղթանակն էր, վորով սկիզբ դրվեց Կրասնովշչինայի լիակատար ջախջախման։

Հետագայում, արդեն Դենիկինի դեմ մղվող պայքարում 4-րդ Դիվիզիային միացավ հեծելազորային 6-րդ դիվիզիան, վորը ծնունդ էր առել Ստավրոպոլի շրջանի հարևան դաշտերում։ Այդ յերկու դիվիզիան կազմեցին առաջին հեծյալ կորպուսը, վորը փայլուն կերպով արդարացրեց իր վրա դրված բոլոր խնդիրները և իրար հետևից հաջորդաբար ջախջախեց գեներալներ **Պոկրովսկու, Շատիլովի և Ուլագայի** ամբողջ յերեք հեծելազորային կորպուսները, իսկ հետո մի հարվածով վոչնչացրեց գեներալ **Ալեքսեյեվի** խումբը, վոր բաղկացած էր 3.000 հետևակներից և հեծյալների 7 գնդից։

Յերիտասարդ Խորհրդային Հանրապետության համար տագնապալից որերին գեներալ **Մամոնտովի** հինգհազարանոց հեծելազորը շրջում էր մեր թիկունքում և ավերի էր Յելեցը, Տամբովը և Կոզլովը։ Մեր հեծյալ կորպուսը ուղարկվեց գեներալի վրա։ **Մամոնտովը** այն պահին արդեն Վորոնեժի մոտ միացել էր գեն. **Շկուրոյի** հեծյալ կորպուսի հետ։ 1919 թվի հոկտեմբերի վերջին սպիտակ գվարդիական յերկու այդ կորպուսն էլ ջախջախված էյին մեր հեծելազորի կողմից և հոկտեմբերի 25-ին մենք գրավեցինք Վորոնեժը։

Դա մի հարված էր սպիտակների խորին թիկունքին, սպիտակների, վորոնք այդ ժամանակ գրաված ունեյին Կուրսկը և Որյոլը և յերազում էյին շուտով Մոսկվա մտնելու մասին՝ «քառասուն հատ քառասուն» յեկեղեցիների զանգահարության տակ։ Վորոնեժի գրավումով սկիզբը դրվեց «Ռուսաստանի հերթական կառավարողի»—գեն. Դենիկինի մի նոր ջախջախման։

Մեր հեծյալ կորպուսի կազմին միացվեց այնուհետև ևս մեկ հեծյալ դիվիզիա—11-րդ (այժմ 8-րդ Որենբուրգյանը)։

Շարժվելով դեպի հարավ և իր նոր կազմով ձեռք բերելով մի շարք խոշոր հաղթանակներ—Կաստորնայայի, Ոսկոլի տակ,—կորպուսը՝ համաձայն հարավային ֆրոնտի ՌՀԽ վորոշման, վերանվանվեց առաջին հեծելազորի։ Ցույց տալով մի շարք փայլուն հաջողություններ, գրավելով Տագանրոգը, Ռոստովը, Առաջին Հեծելազորը 1920 թվին, փետրվարի վերջերին հաղթեց նաև Դենիկինի առավելապես մարտունակ ուժերին Յեգորլիկսկիի պատմական մարտում և վերջնականապես փակեց Դենիկինի հաշիվը։

Սակայն՝ Խորհուրդների թշնամիները դեռևս չհանգստացան։ Դեպի մեր արևմտյան սահմանները—դեպի Բելոռուսիան և Ուկրաինա—շարժվեցին լեհերը, և հանրապետությունը նորից տագնապալից որեր ապրեց։ Առաջին Հեծելազորն՝ ուժեղացված ևս մեկ—13-րդ հեծյալ դիվիզիայով և հատուկ հեծյալ բրիգադով՝ ուղարկվեց ընդդեմ պայծառաշուք պաների։

1920 թվի մայիսի վերջերին 1-ին հեծելազորն արդեն լեհական ֆրոնտումն էր։ Մի քանի որից հետո նա ճեղքեց լեհերի ֆրոնտը և գրավեց Բերդիչևն ու Ժիտոմիրը։ Լեհերն ստիպված էյին լքել Կիևը և սկսել նահանջը։ Մի շարք հերոսական հաղթանակներ և մարտեր կրեց իր ուսերի վրա մեր հեծելազորը։ Շարունակաբար շարժվելով մեր հետևակ բանակների առջևից, Առաջին հեծելազորը հասավ մինչև Լվով, սակայն այստեղ, Վարշավայի մոտ ունեցած մեր անհաջողությունների պատճառով, նրան տրվեց ուրիշ ուղղություն։

Շուտով լեհերի հետ տեղի ունեցած հաշտությունը հնարավորություն տվեց գլխավոր հրամանատարության նետել առաջին հեծելազորը Վրանգելի դեմ։ «Թագավորությունից» այս վերջինը 1920 թվի նոյեմբերին կարողացել եր դուրս սողալ Ղրիմից և տարածվել դեպի հյուսիս գրեթե մինչև Դնեպրոպետրովսկ։ Վրանգելի հաշիվը փակվեց շատ շուտով, և նրա վողորմելի մնացորդները ճողոպրեցին դեպի սպիտակ գվարդեյշչինայի «թանկագին դաշնակիցները»։

Սակայն, ֆրոնտների լիկվիդացիան դեռ ևս լիակատար հանգստություն չբերեց հեծելազորին, վորպեսզի նա հնարավորություն ունենա անարգել կերպով զբաղվելու իր շինարարությամբ ու ուսուցմամբ։ Ավելի քան մեկ տարվա ընթացքում հեծելազորի առանձին մասերն յեռանդուն կերպով զբաղված եյին տարբեր ռայոնները բանդիտիզմից մաքրելու աշխատանքով։ 11-րդ հեծյալ դիվիզիան դեռևս մինչև 1926 թիվը շարունակում եր պայքարը Թուրքեստանում։ Բոլոր այս ոպերացիաները կատարվեցին վոչ պակաս հաջողությամբ քան քաղաքացիական պատերազմի ֆրոնտներում։

Հեծյալ բանակը մեր յերկրի բանվորների և գյուղացիների ամենասիրելի զավակն եր և այսորել ե։ Նրա զավակներից շատ շատերն են այսոր համառ աշխատանք թափում սոցիալիստական մեծ շինարարության բոլոր ճյուղերում։ Նրանցից շատերը դեռ մինչև հիմա յել ամրացնում և կոփում են մեր փառապանծ Կարմիր հեծելազորի հզոր ուժը։

Հեծյալ բանակի հզորությունը կայանում եր նրանում, վոր մարտիկները քաղաշխատավորները և հրամանատարները բանակի ՌՀԽ հետ միասին կազմում եյին միասնական, մարտական, տակուն մի ընտանիք, վորը ձուլել եր իր ուժերը պայքարներում—«բոլորը մեկի համար, մեկը բոլորի համար» լոզունգի ներքո։ Հեծյալ բանակը զորեղ եր նրանով, վոր մարտիկներից և վոչ մեկը յերբեք վողջ վողջ գերի չեր հանձնվում.—ահա, ի միջի այլոց, ինչն եր պատճառը, վոր հեծելազորը գերություն չգիտեր։

Հեծելազորային այս տրադիցիաներից և սխրագործություններից դասեր պիտի առնեն և դաստիարակվեն յերիտասարդ կարմիր հեծելազորայինները և ամբողջ յերիտասարդությունը, վորպեսզի արժանի շինարարներ և պաշտպաններ լինեն աշխարհիս առաջին պրոլետարական պետության—ԽՍՀՄ-ի համար։

Վ. ՎԻՇՆԵՎՍԿԻ

# ԱՌԱՋԻՆ ՀԵԾԵԼԱԶՈՐԸ

*Թարգմանութ. Գ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ*

**Պիես 3 ցիկլով 40 եպիզոդով նախաբանով յեվ 2 ընդմիջումով**

| | |
|---|---|
| Բեմադրություն | Ա. ԳՈՒԼԱԿՅԱՆԻ |
| Արտաքին ձևավորում | Մ. ԱՐՈՒՏՉՅԱՆԻ |
| Յերաժշտություն | Վ. ՇՊԻԼԻՆԳԻ |
| Ռեժիսորի ասիստենտներ | Գ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ |
| | ԱՆ. ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| Կինո կադրերի մոնտաժ | Ա. ՄԱԴԱԹՅԱՆԻ |
| Զինվորական կոնսուլտանտ | Ա. ԿՅՈՒՐԵՂՅԱՆ |
| Ռեժիսոր-մոնտիրովշչիկ | Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |
| Ռեժիսորի օգնական | Ս. ԴԱԼԼԱՔԻՇՎԻԼԻ |
| Նկարիչ—դեկորատոր | Ա. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ |
| Մաշինիստ | Ս. ՍԵԼՅԱՆ |
| Ելեքտրոմոնտյոր | Ա. ՍԱՄՈՒՐՂԱՇՅԱՆ |
| Ներկայացումը վարում են՝ | Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |
| | Ս. ԴԱԼԼԱՔԻՇՎԻԼԻ |
| | Գ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ յեվ |
| | ԱՆ. ՎԱՐԴԱՆՅԱՆ |

# ԱՌԱՋԻՆ ՑԻԿԼ

(Առաջին ցիկլի մեջ մտնում են 19 եպիզոդ)

## 1. ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Եպիզոդներ՝ 1, 2, 3, 4.

*ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝*

| | |
|---|---|
| *Առաջնորդող* | Քոչարյան Սուրեն |
| *Սըսոյև, լեյբ-գուսար* | Ավետիսյան Ավետ |
| *Ցենթասպահ* | Կոստանյան Մ. |
| *Բժիշկ* | Ջաֆարյան Խ. |
| *Կրտսեր կոռնետ (Օֆիցեր Իքս)* | Վաղարշյան Վ. |
| *Ռոտմիստր* | Մանվելյան Մ. *(վաստակ. դեր.)* |
| *Օխրիմենկո* | Ալլահվերդյան Լ. և |
| | Ավագյան Հ. |
| *Արխիպով* | Մարյան Լ. |
| *Լեյբ-գուսարներ* | Ասլանյան Գ. |
| | Պողոսյան Գ. |
| | Սամոկրանյան Տ. |
| | Ասլանյան Հ.*) |
| | Աբեղյան Ս.*) |
| | Գևորգյան Ն.*) |

## 2. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Եպիզոդներ՝ 5, 6, 7, 8, 9.

*ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝*

| | |
|---|---|
| *Առաջնորդող* | Քոչարյան Սուրեն |
| *Արխիպով* | Մարյան Լ. |
| *Օխրիմենկո* | Ալլահվերդյան Լ. |
| | Ավագյան Հ. |
| *1-ին զինվոր* | Ասլանյան Գ. |
| *2-րդ զինվոր* | Սամոկրանյան Տ. |
| *3-րդ զինվոր* | Սարոյան Ռ. |
| *Վիրավոր* | Աբեղյան Ս.*) |
| *Դիտող* | Ասլանյան Հ.*) |
| *Օֆիցեր Իքս* | Վաղարշյան Վ. |
| *Վախմիստր* | Ավագյան Հ։ |
| *Սըսոյև* | Ավետիսյան Ավետ |
| *Ցենթասպահ* | Կոստանյան Մ։ |
| *Ընթերցող* | Սյուզան-Գարագաշ |
| *Սըսոյևի կինը* | Ալեքսանյան Լ։ |
| *1-ին կին* | Ազամյան Ցեր։ |
| *2-րդ կին* | Պարոնիկյան Մ. |
| *Ծերունի* | Պողոսյան Գ. |
| *3-րդ կին* | Արագյան Ա.*) |

| | |
|---|---|
| *4-րդ կին* | * * * |
| *Հաշմանդամներ* | Ասլանյան Հ.*) |
| | Խաչատրյան Ս.*) |
| | Աբրահամյան Ց.*) |
| | Հարությունյան Ս.*) |
| | Գևորգյան Ն.*) |

## 3. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Նկարներ՝ 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19.

### *ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝*

| | |
|---|---|
| *Առաջնորդող* | Քոչարյան Սուրեն |
| *Առաջին օֆիցեր* | Բագրատունի Վ. |
| *Կերենսկի* | Մարգունի Վ. |
| *Տիկիններ, կերենսկու չերկրպագուներ* | Սյուզան-Գարագաշ |
| | Ստեփանյան Վ. |
| | Ալեքսանյան Լ. |
| | Գարագաշ Հայկուհի |
| *Գթության քույրեր* | Պարոնիկյան Մ. |
| | Արազյան Ա.*) |
| | Աղաջանյան Հ.*) |
| | Եղյան Ա.*) |
| *Բոմբիստ* | Մանվելյան Մ. *(վաստ. դեր.)* |
| *Օֆիցեր Իքս* | Վաղարշյան Վ. |
| *Իվան Կոստրով* | Ասլանյան Գ. |
| *Ոսկրիմենկո* | Ալլահվերդյան Լ. և |
| | Ավագյան Հ. |
| *Արխիպով* | Մարյան Լ. |
| *3-րդ զինվոր* | Տարոյան Ռ. |
| *Կոմիտեաչիկ* | Վարդանյան Ա.Ն. |
| *Ղազախ* | Ռուճիարյան—Որի |
| *Սեմյոնենկո* | Շամիրխանյան Ե. |
| *1-ին զինվոր* | Պողոսյան Գ. |
| *2-րդ զինվոր* | Մարյան Լ. |
| *3-րդ զինվոր* | Տարոյան Ռ. |
| *4-րդ զինվոր* | Սոմոկրանյան Ա. |
| *Սըսոյև* | Ավետիսյան Ավետ |
| *Գրենադեր (Օֆիցեր Իքս)* | Վաղարշյան Վ. |
| *2-րդ օֆիցեր* | Ջանիբեկյան Գ. |
| *3-րդ օֆիցեր* | Աճրիկյան Գ. |
| *Ցեսալու* | Կոստանյան Մ. |
| *Պառավ* | Գարագաշ Հայկուհի |
| *Սըսոյևի կինը* | Ալեքսանյան Լ. |
| *Ղազախի կինը* | Ադամյան Եվ. |

Վերջ առաջին ցիկլի

*ԸՆԴՄԻՋՈՒՄ*

## ՅԵՐԿՐՈՐԴ ՑԻԿԼ

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎ

Էպիզոդներ՝ 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33.

*ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝*

| | |
|---|---|
| *Առաջնորդող* | Քոչարյան Սուրեն |
| *Հրամանատար* | Դաստոյան Վ. |
| *Կոմիտետչիկ* | Վարդանյան Ա.Ն. |
| *Սրսոյե* | Ավետիսյան Ավետ |
| *Ղազախ* | Բունիաթյան-Որի |
| *Բանվոր* | Ներսեսյան Հ. |
| *Գալիֆեյով մարտիկ* | Մուրադյան Ռ. |
| *Մարտիկներ* | Պողոսյան Գ. |
| | Մարյան Լ. |
| | Ասլանյան Գ. |
| | Սամոկրանյան Ծ. |
| | Ջաֆարյան Խ. |
| | Սարոյան Ռ. |
| *Միտրեյ* | Ավագյան Հ. |
| *Օֆիցեր Իքս* | Վաղարշյան Վ. |
| *Բուդյոնովցիներ* | Սոմոկրանյան Ծ. |
| | Պողոսյան Գ. |
| | Աբեղյան Ս.*) |
| | Ասլանյան Հ.*) |
| | Գեվորգյան Ն.*) |
| *Օֆիցերներ* | Կոստանյան Մ. |
| | Մարգունի Վ. |
| | Ջանիբեկյան Գ. |
| | Աճրիկյան Գ. |
| | Բագրատունի Վ. |
| *Բուդյոննին* | Դաստոյան Վ. |
| *Հեռագրիչ* | Գաբրիելյան Գ. և |
| | Ջաֆարյան Խ. |
| *Ռոտմիստր* | Մանվելյան Մ. (*վաստ. դեր.*, |
| *Հեռագրիչ* | Սոմոկրանյան Ծ. |
| *Օխրիմենկո* | Ալլահվերդյան Լ. |
| | Ավագյան Հ. |
| *Մարտիկներ* | Սարոյան Ռ. |
| | Մարյան Լ. |
| | Ասլանյան Գ. |
| | Սամոկրանյան Ծ. |
| *Պարողունի* | Պարոնիկյան Մ. |
| *Միտրեյի հայրը* | Այվազյան Ց. |
| *Գերի ղազախ* | Ալլահվերդյան Լ. |
| *Պառավ* | Ստեփանյան Վ. |
| *Հիվանդ աղջիկ* | Պարոնիկյան Մ. |

| | |
|---|---|
| *Լեհ պարուչիկ* | Բագրատունի Վ. |
| *Լեհ զինվորներ* | Պողոսյան Գ. |
| | Ասլանյան Գ. |
| | Մարգունի Վ. |
| | Աբեղյան Մ.*) |
| *Սեմյոնենկո* | Տամիրխանյան Տ. |
| *Բոգդեկ (վիրավոր)* | Դասոյան Վ. |
| *Պիլսուդսկիյ* | Այվազյան Տ. |
| *Լեհ պարուչիկ* | Բագրատունի Վ. |
| *Պահակ* | Զաքարյան Խ. |
| *Արխիպով* | Մարյան Լ. |
| *Հեռախոսիչ* | Գաբրիելյան Գ. |
| *1-ին հեռախոսիչ* | Սոմոկրանյան Մ. |
| *2-րդ հեռախոսիչ* | Աբեղյան Մ.*) |
| *3-րդ հեռախոսիչ* | Ասլանյան Հ.*) |
| *Օֆիցեր Իքս* | Վաղարշյան Վ. |
| *Բուդյոննովցիներ* | |
| *Գերի օֆիցերներ* | |

Վերջ յերկրորդ ցիկլի

*ԸՆԴՄԻՋՈՒՄ*

## ՅԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

## Ա Յ Ս Տ Ե Ղ  Ե Լ  Է  Ֆ Ր Ո Ն Տ

Եպիզոդներ՝ 34, 35, 36, 37, 38, 39, 40,

### *ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝*

| | |
|---|---|
| *Առաջնորդող* | Քոչարյան Սուրեն |
| *Բանվոր* | Ներսեսյան Հ. |
| *1-ին հարվածային* | Մարգունի Վ. |
| *2-րդ հարվածային* | Դասոյան Վ. |
| *3-րդ հարվածային* | Բագրատունի Վ. |
| *4-րդ հարվածային* | Պողոսյան Գ. |
| *Սեմյոնենկո* | Տամիրխանյան Տ. |
| *Գալիֆեյով մարտիկ (Գյուղխորհրդի նախագահ)* | Մուրադյան Բ. |
| *» » քարտուղար* | Մ. Հովհաննիսյան*) |
| *Կուլակ Դադըկին* | Մարյան Լ. |
| *Ղազախ* | Ռունիաբյան-Որի |
| *Նիկանոր (Հաշմանդամ բուդյոննովցի)* | Կոստանյան Մ. |
| *Տ ղ ա* | Դիլաքյան Թ.*) |

| | |
|---|---|
| *Դեղչկահներ* | Ադամյան Յեր. |
| | Ալեքսանյան Լ. |
| | Գարագաշ Հայկուհի |
| | Ստեփանյան Վ. |
| | Պարոնիկյան Մ. |
| | Արազյան Ա.*) |
| | Աղաջանյան Հ.*) |
| | Յեղյան Ա.*) |
| *Գյուղացիներ* | Ասլանյան Գ. |
| | Պողոսյան Դ. |
| | Սամոկրանյան Տ. |
| | Ջաֆարյան Խ. |
| | Սարոյան Ռ. |
| | Գեվորգյան Ն.*) |
| | Աբրահամյան Հ.*) |
| | Հովհաննիսյան Ս.*) |
| | Հարությունյան Ս.*) |
| | Աբրահամյան Տ.*) |
| | Ռաբայան Ա.*) |
| | Ասլանյան Հ.*) |
| | Աբեղյան Ս.*) |
| *Յերկու. կարմիր բանակային* | Ասլանյան Գ. |
| *Գյուղացի (Ռֆիցեր Իքս)* | Վաղարշյան Վ. |
| *Սըսոյև* | Ավետիսյան Ավետ |
| *Ոխրիմենկո* | Ալլահվերդյան Լ. և |
| | Ավագյան Հ. |
| *Կարմիր բանակայիններ* | |

*) *Մասնակցում են Պետթատրոնի թատերական տեխնիկումի ուսանողները և սերող աշխատակիցները։*

---

A III 3054

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0068405

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖ

Գլավլիտ № 2590(գ   Պատ. 520   Տիրաժ 2000

[054]
652
ЦЕНА
А III
3054

Հեհ
Հեհ ԳԻՆԸ 5 ԿՈՊ.